«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ «Սովորողների մեջ համագործակցային կարողությունների ձևավորումը առարկայի դասավանդման գործընթացում»

Առարկան՝ Ինֆորմատիկա

Հետազոտող ուսուցիչ՝ Արմենուհի Հայրապետյան

Ուսումնական հաստատություն՝ «ՀՀ Արարատի մարզի Արտաշատ ք. հ.4 հիմնական դպրոց ՊՈԱԿ»

Երևան 2023

Բովանդակություն

Ներածություն----------3

Գլուխ1. Համագործակցային ուսուցման սկզբունքները----------4

1.1 Դրական փոխկախվածությունը փոքր խմբի անդամների ----------6

1.2 Հաշվետու լինելը և անձնական պատասխանատվությունը փոքր խմբերում----8

1.3 Սոցիալական հմտություններ ----------10

1.4 Խմբային մշակումներ և ինքնագնահատում ----------13

1.5 Ինտերակտիվ և համագործակցային ուսուցման առաջադրանքները----------15

Գլուխ 2. Համագործակցային ուսուցման կազմակերպումը ինֆորմատիկայի դասերին-- 17

Եզրակացություն----------21

Օգտագործված գրականություն ----------22

Ներածություն

«Այն ինչ այսօր երեխաները կարող են անել միասին,

վաղը նրանք դա կանեն միայնակ»

Լև Վիգոտսկի[1]

Ուսուցման մոտեցումների և մեթոդների ընտրությունը առավելապես ուսուցչի խնդիրն է: Ուսուցիչը որպես կրթական գործընթացի անմիջական կազմակերպիչ, շահագրգռված է ապահովելու ուսման բարձր որակ, որի հիմնական արդյունքներից մեկը՝ անհատի կողմից աշխատանքի շուկայում կամ շարունակական կրթության համակարգում իր տեղը հեշտությամբ գտնելու համար անհրաժեշտ գիտելիքների և հմտությունների ձեռքբերումն է: Հասարակությունը դպրոցին և հատկապես ուսուցչին է լիազորել իր ապագայի կերտումը, ի դեմս վաղվա՝ կրթված և հասուն, պետական մտածողություն ունեցող, փոխօգնության պատրաստ և ի վիճակի, հանդուրժող, օրենքներ և այլընտրանք հարգող, կյանքի դժվարին իրավիճակներում կողմնորոշվող և որոշումներ կայացնող քաղաքացու: Համագործակցային ուսուցման մեթոդների լիարժեք կիրառման դեպքում կարելի է հաջողությամբ հասնել ուսուցման վերոհիշյալ նպատակներին: Համագործակցային ուսուցումը ուսումնառության գործընթացը կդարձնի առավել գրավիչ և հետաքրքիր՝ նպաստելով սովորողների համար հավասար մասնակցության հնարավորությունների ստեղծմանը: Սա թույլ կտա ուսուցչին լուծելու ավանդական մեթոդներով գրեթե անլուծելի թվացող բոլոր սովորողների ակտիվ մասնակցության ապահովման հարցը: Դասարանը կդառնա ընդհանուր նպատակ ունեցող անհատների փոքր խմբերի մի թիմ, որտեղ հեշտությամբ կարելի է լուծել ամենաբարդ մանկավարժա-հոգեբանական խնդիրները՝ անկախ առարկայից և թեմայից: Գիտելիքի մատուցմանն ու վերարտադրման ստուգմանը փոխարինելու են ուսուցման գործընթացի կառավարման և սովորողներին նոր հմտությունների ուսուցման մոտեցումները: Խիստ արդիական են դառնում «ինչ և ինչպես սովորեցնել» հարցերը:

Այժմ ամենատարբեր տեղեկատվությունը հասանելի է ակնթարթորեն, ինչը կարևորում է տեղեկատվության որոնման, ընտրության, մշակման, յուրացման և օգտագործման նպատակով անհրաժեշտ նոր գիտելիքների, հմտությունների, կարողությունների ձեռքբերումը: Հետևաբար կրթության գլխավոր նպատակն է դառնում «սովորել սովորեցնելը», ինչը՝ որքան հին, այնքան էլ արդիական է այսօր:

<u>Հարց՝</u> Սովորողների մոտ ինչպե՞ս զարգացնել համագործակցային կարողությունները ինֆորմատիկայի դասերին:

[1] Johnson, R. and Johnson. D. “An Overview of Cooperative Learning”

<u>Հետազոտության նպատակն է՝</u>

1. Ուսումնասիրել համագործակցային ուսուցման հիմնական սկզբունքները:

1.1 Ո՞րն է դրական սոցիալական փոխկախվածությունը:

1.1 Ինչպե՞ս է հնարավոր բարձրացնել դրական սոցիալական փոխկախվածությունը փոքր խմբերում:

1.2 Ի՞նչ է հաշվետվությունը խմբային աշխատանքում:

1.2 Ինչպե՞ս է հնարավոր բարձրացնել պատասխանատվությունը փոքր խմբերում:

1.3 Ի՞նչ է սոցիալական հմտությունը:

1.3 Ի՞նչ մակարդակներ ունենսոցիալական հմտությունները:

1.4 Ի՞նչ է խմբային մշակումը:

1.4 Ինչպե՞ս է խմբային մշակումը կապվում ուսուցման հետ:

1.5 Ո՞րն է ինտերակտիվ առաջադրանքը:

1.5 Ինչպե՞ս է հնարավոր առաջադրանքի մշակման միջոցով խմբային աշխատանքում ապահովել բոլոր աշակերտների ակտիվ մասնակցությունը:

2. Ուսումնասիրել ինֆորմատիկայի դասերին համագործակցային ուսուցումը ներմուծելու և զարգացնելու օրինակներ:

Գլուխ1. Համագործակցային ուսուցման սկզբունքները

Համագործակցային ուսուցումը մեծ ճանաչում է ձեռք բերել բազմաթիվ երկրների շատ ուսուցիչների կողմից: Այն առավել արդյունավետ է, եթե ողջ դասարանի տրոհում երկուսից չորս աշակերտ ընդգկրող խմբերի՝ իրենց հանձնարարված ընդհանուր առաջադրանքը կատարելու նպատակով: Փոքր խմբային աշխատանքը դասավանդման և ուսուցման առումով ունի առնվազն երեք առավելություն: Առաջին, փոքր խմբային աշխատանքը միտված է աշակերտների ակադեմիական ուսուցման բարելավմանը: Այն ոչ միայն դրական ազդեցություն է ունենում գիտելիքի երկարաժամկետ մտապահման համար, այլ նաև նպաստում է հասկացությունների, սկզբունքների և իրադարձությունների ըմբռնմանը: Հետազոտողները նշում են, որ սա հիմնականում պայմանավորված է ուսուցման գործընթացի ժամանակ խոսելու, քննարկելու և փոխազդելու ընդլայնված հնարավորություններով: Երկրորդ, փոքր խմբային աշխատանքը հնարավորություն է ընձեռում աշակերտներին հանդես գալ այնպիսի իրավիճակներում, որոնցում նրանք կարող են զարգացնել սոցիալական և միջանձնային հմտությունները՝ ճանաչողական նպատակներին հասնելուն համընթաց: Երրորդ, փոքր խմբային աշխատանքը դրական ազդեցություն ունի ընդհանրապես դպրոցի և մնացած

աշակերտների և, մասնավորապես, սովորելու և ուսուման վերաբերյալ աշակերտների տեսակետների, մոտեցումների և արժեքների վրա[2]:



Փոքր խմբային աշխատանքը չի հանդիսանում հանձնարարությունների որևէ մեկ մեթոդ, այն ավելի շուտ **մոտեցում է,** որի հիմքում ընկած է սոցիալական փոխներգործության խթանումը և փոխադարձ համագործակցությունը փոքր խմբերում իրավիճակային ուսուցման ժամանակ:

Համագործակցային ուսուցման լայն տարածմանը նպաստող գործոնները բազմաթիվ են: Առաջինը, այդ ուսուցման անհատական տարբերությունների ակոմոդացիայի՝ հարմարեցման հնարավորությունն է դասարանում: Երկրորդ գործոնը առնչվում է այն հնարավորություններին, որ համագործակցային ուսուցումը առաջարկում է բազմակողմանի կրթական նպատակներին միաժամանակ հասնելու համար: Ակադեմիական ուսուցման նպատակների գերակայող դերի հետևանքով, աշխարհն այսօր կոչ է անում ավելի շատ շեշտել աշակերտների անձնական, սոցիալական և բարոյական զարգացումը:

Երրորդ դրական գործոնը կապված է մարդու ուսուցման առանձնահատկությունների վերաբերյալ ժամանակակից գաղափարների հետ: Լավ ուսուցման այնպիսի սկզբունքներ, ինչպիսիք են գիտելիքի ակտիվ կառուցումը՝ դարձնելով ուսուցումը իմաստային և ավելի շատ ինքնաուղղորդվող, ինչպես նաև նպաստելով աշակերտների միջև երկխոսությունների ծավալմանը ուսուցողական իրավիճակներում, հանդիսանում են արդյունավետ ուսուցմանը բնորոշ ժամանակակից արդյունքներից մի քանիսը միայն:

Բոլոր խմբային աշխատանքները չէ, որ կարող են հանգեցնել համագործակցային ուսուցման: Արդյունավետ համագործակցության առաջացման համար ուսուցիչները պետք է իրենց բոլոր դասարանները բաժանեն երկու, երեք, կամ չորս աշակերտներից բաղկացած խմբերի և ապահովեն, որ յուրաքանչյուր խմբի աշխատանքներում առկա լինեն ներկայացվող հիմնական բաղադրիչները: Այդ տարրերն են. ուսուցողական խմբերում դրական սոցիալական փոխկախվածությունը, արդյունավետ ուսուցման համար անհատական հաշվետվությունը և պատասխանատվությունը, անհատական և կոլեկտիվ գործընթացների վերաբերյալ մտորումները և քննադատական վերանայումը,

[2] Դոկ. Փասի Սահլբերգ, Հելսինկիի համալսարան, համագործակցային ուսուցման միջազգային ասոցիացիայի խորհրդի անդամ

ինչպես նաև ուսումնական ծրագրի և ուսումնական նյութերի վերակառուցումը խմբային առաջադրանքների համար:

1.1 ԴՐԱԿԱՆ ՓՈԽԿԱԽՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՔՐ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՄԻՋԵՎ

Համագործակցային ուսուցումը խթանելու համար անհրաժշետ պայմաններից մեկը, որը պետք է պահպանեն բոլոր խմբերը, հանդիսանում է խմբի բոլոր անդամների միջև բավարար չափով դրական փոխկախվածությունը, երբ նրանք աշխատում են ընդհանուր առաջադրանքի վրա: Դրական սոցիալական փոխկախվածությունը նշանակում է, որ խմբի բոլոր անդամները հավատում և զգում են, որ իրենք «սուզվելու են կամ լողալու են միասին», և դա առկա է այն դեպքում, երբ աշակերտները հասկանում են, որ իրենք կապված են իրենց խմբի անդամների հետ այնպես, որ իրենք չեն կարող հասնել հաջողության, քանի դեռ իրենց խմբի ընկերները չեն հասել հաջողության և հակառակը:

Սոցիալական փոխկախվածությունը դասարանում կարող է առաջանալ երեք տարբեր ձևերով: Տվյալ խմբում բացասական սոցիալական փոխկախվածություն գոյություն ունի այն դեպքում, երբ խմբի անդամները մրցակցում են միմյանց հետ՝ իրենց ուսուցման նպատակներին հասնելու համար: Նման մրցակցային իրավիճակում, երբ որևէ մեկը հաղթող է, մնացածները պարտվում են: Երկրորդ, սոցիալական փոխկախվածությունը կարող է անհետանալ, ինչը նշանակում է, որ խմբի անդամները առկախվում են իրենց խմբակիցների հաջողություններից կամ ձախողումներից: Խմբային աշխատանքի ժամանակ նման բան տեղի է ունենում այն դեպքում, երբ յուրաքանչյուր աշակերտ կատարում է իր ինքնուրույն առաջադրանքը և այն կապ չունի մնացածների առաջադրանքների հետ: Երրորդ, դրական սոցիալական փոխկախվածությունը նշանակում է, որ խմբի անդամները գիտակցում են, որ իրենք կարող են հասնել ուսուցման իրենց նպատակներին միայն և միմիայն այն դեպքում, երբ խմբի այլ աշակերտները ևս հասնեն իրենց նպատակներին: ***Դրական փոխկախվածությունը համագործակցային ուսուցման առանձնահատկությունները սահմանող առաջին և ամենակարևոր տարր է:***

Գոյություն ունեն բազմաթիվ պրակտիկ տեխնիկաներ և կանոններ, որոնք ուսուցիչը կարող է օգտագործել իր դասարանում խումբը կառուցելու և դրական փոխկախվածությունը փոքր խմբերում խթանելու համար: Առավել հաճախ կիրառվում են ստորև ներկայացված չորսը:

Հստակ խմբային նպատակներ. Համոզվելու համար, որ աշակերտներն իրոք հավատում և կարծում են, որ իրենք «սուզվելու կամ լողալու են միասին» և որ նրանց համար իրոք նշանակություն ունի, թե ինչպես են սովորում իրենք և իրենց խմբի անդամները, ուսուցիչը պետք է խմբերի համար մշակի հստակ փոխադարձ նպատակներ: Օրինակ, ուսուցիչը կարող է ասել «սովորեք հանձնարարված նյութը և

ապահովեք, որ ձեր խմբի անդամներից յուրաքանչյուրը նույնպես սովորի նույն նյութը»: Ուստի կարևոր է, որ տվյալ խմբի յուրաքանչյուր աշակերտ հասկանա իր առաջադրանքի նպատակները և ըմբռնի, որ դա իր խմբի բոլոր անդամների համատեղ նպատակ է: Պրակտիկ տեսակետից համատեղ ուսուցման նպատակը նշանակում է, որ խումբը ավարտում է իրեն հանձնարարված առաջադրանքը միայն այն դեպքում, երբ խմբի անդամներից յուրաքանչյուրն ավարտում է իր անհատական առաջադրանքը: Կարևոր է խմբերին տրամադրել բավարար ժամանակ՝ ուսուցման նպատակները հասկանալու և այդ նպատակներին համատեղ հասնելու փորձը ստանձնելու համար:

Համատեղ հետադարձ կապ կամ գնահատում. Համագործակցային խմբային աշխատանքի դեպքում, ի լրումն ավանդական անհատական հետադարձ կապի, խումբը կարող է ստանալ նույն փոխհատուցումը ամբողջ խմբի համար: Երբ ուսուցիչը ցանկանում է շեշտել խմբի ջանքը և համագործակցությունը նոր բաներ սովորելու ժամանակ, նա հավանաբար կցանկանա նաև կիրառել գնահատման այնպիսի գործիքներ, որոնցում աշակերտների առաջադիմությունները փոխկապված են: Օրինակ, ուսուցիչը կարող է բացատրել իր աշակերտներին, որ եթե խմբի յուրաքանչյուր անդամ հասնի գնահատման միավորի նախապես որոշված սահմանին, ապա բոլորը կստանան համաձայնեցված լրացուցիչ միավորներ: Այլ կերպ ասած, եթե խմբի բոլոր չորս անդամներն էլ 20 միավորից կարողանան հավաքել 14-ը, ապա նրանց բոլորին կտրվի լրացուցիչ երեք միավոր, անկախ նրանց ստացած միավորից: Միավորի սահմանը խմբի բոլոր աշակերտների համար կարող է լինել նույնը կամ տարբեր՝ կախված նրանց նախկին ձեռքբերումներից: Որոշ դեպքերում հնարավոր է յուրաքանչյուր խմբից պատահականորեն ընտրել մեկ աշակերտ՝ թեսթի համար, և այդ աշակերտի ստացած միավորը կհամարվի իր խմբի բոլոր անդամները միավորը:

Ռեսուրսների բաժանում և նյութի համատեղում. Դրական փոխկախվածության խթանման ամենատարածված եղանակներից մեկը ուսումնական նյութը մասերի բաժանելն է և խմբի անդամներից յուրաքանչյուրին այդ նյութի առանձին մասերը հանձնարարելը: Եթե սա իրականացվում է պատշաճ կերպով, ապա առաջադրանքը ավարտելու համար պահանջում է կատարել այդ մասերից յուրաքանչյուրը, և, ուստի, խմբի յուրաքանչյուր անդամից պահանջվում է ավարտին հասցնել առաջադրանքը: Սա կոչվում է ռեսուրսի փոխկախվածություն: Ավելին, ուսուցիչը ուսումնական նյութը խմբի անդամներից յուրաքանչյուրին տրամադրելու փոխարեն, կարող է խմբին տրամադրել միայն մեկ գիրք, հոդված կամ աշխատանքային թերթիկ: Այսպիսով աշակերտները կրկին դառնում են ռեսուրս-փոխկախված, որն էլ, իր հերթին, ազդում է խմբի ընդհանուր դրական փոխկախվածության վրա: Ուսուցման նյութի համատեղ օգտագործումը կբարձրացնի խմբերում հաղորդակցությունը և փոխներգործությունը: Ելնելով այս տրամաբանությունից, սովորաբար խելամիտ մոտեցում է յուրաքանչյուր խմբին խնդրել պատրաստել մեկ համատեղ հաշվետվություն, պլակատ կամ ի ցույց դնել իրենց սովորածի որևէ արդյունքներ:

Դերերի բաշխում. Ուսուցիչը կարող է աշակերտների համար պատրաստել համապատասխան դերեր, որոնց նպատակը խմբերում միասնականության բարձրացումն է: Դերերը կարող են լինել օպերատիվ դերեր, օր.՝ ընթերցող, հաշվետվություն ներկայացնող, ցրիչ կամ ժամանակին հետևող, սակայն դրանք կարող են լինել նաև սոցիալական դերեր՝ քաջալերող, ամփոփող, դիտորդ կամ մշակող: Կարևոր է հասկանալ, որ իրական ուսումնական միջավայրում աշակերտը կարող է իրեն կաշկանդված զգալ, և նրա համար դժվար կլինի խաղալ թե՛ այս և թե՛ այլ դերեր: Հետևաբար, ավելի լավ է օգտագործել քարտեր, որոնցում գրված են դերերի հիմնական բնորոշ հատկանիշները: Աշակերտների հետ դերերով անցկացված մեկ կամ երկու պարզ ուսումնական վարժությունները հավանաբար նրանց ավելի վստահ կդարձնեն համագործակցային իրավիճակային ուսուցման ժամանակ:

Սա լավ միջոց է թիմի ոգին բարձրացնելու և խմբերում դրական փոխկախվածությանը նպաստելու համար: Անհրաժեշտ է ժամանակ հատկացնել այս տեխնիկաներից մի քանիսը խաղալու, ուսուցանելու և փորձելու համար՝ նախքան իրական համագործակցային ուսուցման դասը: Սա հատկապես վերաբերում է այն աշակերտներին, որոնք համատեղ ուսուցման և աշխատանքի ավելի քիչ փորձ ունեն: Որպեսզի նրանք ձեռք բերեն խմբին պատկանելու, արդյունավետ գործող խմբի անդամ լինելու դրական փորձ և ի վիճակի լինեն ներգրավվել համագործակցային ուսուցման մեջ, աշակերտները պետք է խաղարկեն դրական փոխադարձ առանցքային դերերից և սկզբունքներից մի քանիսը՝ խաղերի միջոցով: Խմբում դրական փոխադարձ կախված դառնալը սոցիալական հմտություն է, որը ձեռք բերելու անհրաժեշտ է ուսուցանել թե' աշակերտներին և թե' ուսուցիչներին:

Ուսուցիչը հատկապես զգոն պետք է լինի այն ժամանակ, երբ վերահսկում է, թե որքանով են աշակերտները հասկացել համագործակցային ուսուցման համատեղ նպատակների իմաստը և էությունը: Ուսուցիչը պետք է նաև օգնի իր աշակերտներին ձեռք բերել միասին լինելու, մեկ թիմին պատկանելու և միևնույն նավակում գտնվելու զգացում: Համագործակցային ուսուցումը պահանջում է, որ խմբի յուրաքանչյուր անդամ պատասխանատու լինի ուսման մեջ իր սեփական և, միևնույն ժամանակ, իր խմբի հաջողության համար: Ուսուցման նպատակը և խնդիրները սահմանելիս, ուսուցիչը առանցքային դեր է խաղում: Նա նաև պետք է հստակորեն ասի, թե ինչ է ակնկալվում, որոնք են հաջողության չափանիշները և որքան ժամանակ է նախատեսված ուսումնական առաջադրանքը ավարտելու համար:

1.2 ՀԱՇՎԵՏՎՈՒ ԼԻՆԵԼԸ ԵՎ ԱՆՁՆԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՔՐ ԽՄԲԵՐՈՒՄ

Ընդհանուր առմամբ ակտիվ ուսուցման, և, մասնավորապես, համագործակցային ուսուցման նախապայմաններից մեկը այն է, որ սովորողը հաշվետու է և անձնական

պատասխանատվություն է կրում իր ուսուման գործընթացի և արդյունքների համար: Փոքր խմբերում աշխատանքի անհատական հաշվետվությունը նշանակում է, որ յուրաքանչյուր աշակերտ վստահաբար գիտի, որ ինքը սովորում է այն, ինչ ակնկալվում է իրենից, և որ խմբի ընկերները նույնպես հասնում են իրենց անհատական նպատակներին: Փորձառու ուսուցիչները առավել հաճախ բողոքում են, որ խմբային աշխատանքում բացակայում է պատասխանատվությունը և աշակերտներն իրենց սեփական աշխատանքի ծանրաբեռնվածությունը փոխանցում են խմբի այն անդամների վրա, ովքեր կարող են ավելի շատ բան անել: Համագործակցային ուսուցման մեթոդները իրենց մեջ ներառում են բազմաթիվ տեխնիկաներ և կանոններ, որոնք ուղղված են դպրոցներում փոքր խմբերում անհատական հաշվետվության և անձնական պատասխանատվության խթանմանը:

Խմբային աշխատանքում աշակերտի հաշվետվությունը և անձնական պատասխանատվությունը բարձրացնելու ամենահզոր միջոցներից մեկը յուրաքանչյուր աշակերտի անհատական կատարողականի գնահատումն է, որի դեպքում արդյունքների մասին տեղեկացվում է համապատասխան խմբին և աշակերտին: Համագործակցային ուսուցման գործընթացի ժամանակ աշակերտի կատարողականի գնահատումը կարող է հիմնված լինել ուսուցչի կողմից իրականացվող դիտարկումների կամ կարճ գրավոր կամ բանավոր թեսթերի արդյունքների վրա: Բարեհաջող ուսուցման համար անհրաժեշտ է, որ խումբը տեղյակ լինի խմբի և յուրաքանչյուր անհատ անդամի ուժեղ և թույլ կողմերի մասին, որը կօգնի ճշտել այն ոլորտները, որտեղ զգացվում է օգնության և խրախուսման կարիք: Ավելին, անհրաժեշտ է, որ աշակերտները հասկանան և որոշակիորեն զգան, որ իրենք չեն կարող խուսափել աշխատանքի պատասխանատվությունից՝ իրենց սեփական առաջադրանքը փոխանցելով խմբի որևէ այլ անդամնի:

Հաշվետվության խթանման երկրորդ մեթոդը խմբային աշխատանքի շրջանակներում նոր սկզբունքների և կանոնների համաձայնեցումը/բանակցումը և հստակ ձևակերպումն է ամբողջ դասարանի համար: Ուսուցիչը կարող է ընտրանքային սկզբունքով հրավիրել մեկ կամ երկու աշակերտի՝ ներկայացնելու խմբի արդյունքները:

Փոքր խմբային ուսուցման ժամանակ հաշվետվության բարձրացման երրորդ հզոր միջոցը այն է, երբ յուրաքանչյուր աշակերտ հնարավորություն է ստանում ուսուցանել իր սովորածը իր խմբի անդամներին: Սա այսպես կոչված «Jigsaw» (նկարներ, ռեսբուսներ) համագործակցային ուսուցման մեթոդների բնորոշ առանձնահատկություններից է: «Jigsaw» մեթոդների դեպքում, ուսուցողական նյութը բաժանվում է խմբի անդամների միջև այն հաշվով, որ խմբի անդամներից յուրաքանչյուրն ունենա ամբողջ նյութի միայն մեկ մասը: Այնուհետև նրանք սովորում են ամբողջ նյութի իրենց մասը և խմբի ընկերներին ուսուցանում իրենց սովորածը:

Ի վերջո, ուսուցիչը կարող է օգտագործել գնահատման այնպիսի ձևեր, երբ փոխկապվում են խմբի յուրաքանչյուր անդամի արդյունքները: Օրինակ, աշակերտները հանձնարարված առաջադրանքը ավարտելուց հետո, գրում են կարճ գրավոր թեսթ և

խմբի անդամներից յուրաքանչյուրը ստանում է միևնույն միավորը, որ կազմում է նրանց անհատական միավորների միջինը: Մեկ այլ հնարավոր տարբերակ է յուրաքանչյուր խմբից ընտրանքային եղանակով թեսթի համար մեկական աշակերտ ընտրելը և այդ աշակերտի ստացած միավորը, որպես տվյալ խմբի մնացած անդամների ստացած միավոր դիտարկելը: Անկախ համագործակցային իրավիճակային ուսուցման կիրառվող գնահատման մեթոդից, ուսուցիչը գնահատաման միջոցով պետք է շեշտի անհատական պատասխանատվությունը: Այնուամենայնիվ կարևոր է աշակերտներին մանրամասն բացատրել գնահատման գործողությունները՝ նախքան դրանց իրականացումը:

Եթե ուսուցիչը ցանկանում է ամրապնդել համագործակցությունը իր դասարանում և խմբերում, նա պետք է ընդգծի անհատական հաշվետվությունը և կիրառի համապատասխան միջոցներ՝ խմբերում այն խթանելու համար: Բոլորին քաջ հայտնի դերերը, ինչպիսիք են նախագահի կամ քարտուղարուհու դերերը, հավանաբար ավելի շատ վնասակար կլինեն, քան օգտակար, եթե խելացիորեն չկիրառվեն: Ամեն դեպքում, նոր դերերի՝ օրինակ, խրախուսողի, մեկնաբանի, դիտորդի կամ հարցեր տվողի, նշանակումը կարող է դրականորեն ազդել անհատական հաշվետվության և աշակերտների շրջանում պատասխանատվության զգացողության վրա:

Խմբի անդամները պետք է վստահել միմյանց: Թե որքանով են աշակերտները վստահում միմյանց և որքանով են նրանք իրենց լավ զգում իրենց ընկերների շրջապատում, կախված է այն բանից, թե որքանով է ուսուցիչը վստահում իր աշակերտներին:

Սակայն գործնականում ստացված ապացույցները ցույց են տալիս, որ շատ հաճախ խմբերում հաշվետվությունը թույլ է զարգացած, իսկ սովորելու պատասխանատվությունը ընդհանրապես բացակայում է: Հետևաբար, աշակերտներին պետք է սովորեցնել, որ նրանք մանրամասն և խորությամբ ընկալեն ու կիրառեն այս բաղադրիչը:

1.3. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Խմբային առաջադրանքներ կատարելիս աշակերտներն անցնում են այնպիսի իրավիճակներով, որոնք պահանջում են բարդ փոխհարաբերություններ և սոցիալական հմտություններ: Հաճախ այդ հմտություններին չտիրապետելու պատճառով խմբային աշխատանքը ձախողվում է:

Համագործակցային ուսուցման հաջողության համար պահանջվում է փոքր խմբերում աշխատելու սոցիալական/համագործակցային հմտությունների զարգացում: Այդ հմտությունները ներառում են վարքագծային այնպիսի որակներ, ինչպիսիք են միջանձնային փոխհարաբերություններում վստահության ստեղծումը, ղեկավարման հմտությունները, հաղորդակցումը և միմյանց աջակցելը, որոշումներ կայացնելու և կոնֆլիկտներ լուծելու հմտությունները: Ուսուցիչները ընդունում են որոշումներ, ուսուցանում, շարունակաբար խրախուսում համագործակցային հատուկ վարքագծեր

ամրագրելով դրանք ակնկալիքներում, սահմանված դերերում և ապահովելով հետադարձ կապ:

Աշակերտների մոտ համագործակցային հմտությունների ձևավորման նպատակով ուսուցչի տրամադրած ժամանակն ու գործադրած ջանքերը կախված են առաջին հերթին աշակերտների նախնական պատրաստվածության աստիճանից:

Միմյանց լսելու, առաջացած թյուրըմբռնումներն ու կոնֆլիկտները լուծելու, միմյանց խրախուսելու, համատեղ աշխատանքը պլանավորելու և իրականացնելու վարժությունների օգտագործումը նպաստում է սովորողների մոտ համապատասխան հմտությունների ձևավորմանն ու զարգացմանը: Եթե սովորողները առաջին անգամ են աշխատում խմբերով, ապա ուսուցչի համար գերխնդիր է դառնում նրանց սովորեցնել համագործակցելու հմտություններ:

Ստորև ներկայացնում ենք սոցիալական հմտությունները ըստ համագործակցային ուսուցման մեջ հայտնի չորս մակարդակների, որոնք անհրաժեշտ են համագործակցային ուսուցման խմբերի հիմնադրման և գործունեության համար: Այս մակարդակի հմտություններն օգնում են ձևավորել խումբը և սահմանել վարքագծի համապատասխան նորմեր.



Ձևավորման մակարդակի հմտություններն այն նախնական հմտություններն են, որոնք անհրաժեշտ են համագործակցային ուսուցման խմբերի հիմնադրման և գործունեության համար: Այս մակարդակի հմտություններն օգնում են ձևավորել խումբը և սահմանել վարքագծի համապատասխան նորմեր.

- ապահովել աղմուկի նվազագույն մակարդակ (աշակերտներն անաղմուկ են շարժվում, ցածրաձայն խոսում),
- մնալ խմբի հետ մինչև աշխատանքի ավարտը,
- դիմել խմբի անդամներին անուններով,
- հետևել խոսողին,
- մասնակցել և ներդրում ունենալ առաջադրանքը կատարելիս:

Գործունեության մակարդակի հմտությունները կարևոր են խմբի աշխատանքը կազմակերպելու համար, ընդ որում խումբն իր առջև ունի երկու խնդիր.

Կատարել առաջադրանքը և անդամների միջև հաստատել արդյունավետ աշխատանքային փոխհարաբերություններ: Այս խնդիրներն իրականացնելու համար աշակերտները պետք է կարողանան.

- լսել միմյանց,
- փոխանակել մտքեր,

- հարցեր տալ միմյանց (դա կհեշտացնի նրանց փոխներգործությունն ու մեկը մյուսի աշխատանքը ընկալելը),
- ուղղորդել խմբային աշխատանքը և օգնել խմբին շարժվել առաջ («Եկեք այսպես անենք…» կամ «Ինչու՞ չենք փորձում անել սա…»:
- քաջալերել և արժևորել յուրաքանչյուրի մասնակցությունը («Աշոտ, ի՞նչ կարծիք ունես սրա մասին…»):
- խնդրել օգնել կամ բացատրել,
- առաջարկել աջակցություն («Կցանկանայի՞ր, որ նորից բացատրեի…»)
- վերապատմել «Այսպիսով, դու ասացիր, որ…»)
- նկարագրել միասին աշխատելու ընթացքում ունեցած զգացումները:

Ձևակերպման մակարդակի հմտություններն անհրաժեշտ են ուսուցանվող նյութը խորապես հասկանալու, կատարած գործողությունները հիմնավորելու, բարձրակարգ մտածողության ռազմավարություններ խթանելու, ինչպես նաև հանձնարարված նյութի կատարյալ տիրապետման համար: Այս հմտությունները զարգացնելու համար աշակերտները պետք է կարողանան.

- մտածածը բարձրաձայն ամփոփել,
- Ճշգրիտ լուծումներ որոնել՝ վերլուծելով խմբի անդամների պատմածները «Ես վստահ չեմ, որ դա ճշգրիտ է, լավ կլինի ստուգենք…»),
- ձգտել կատարելագործման՝ կապելով սովորած նյութը ավելի վաղ սովորածի և ունեցած գիտելիքների հետ («Ինչպե՞ս է սա առնչվում …»),
- օգնել խմբին վերհիշել («Մենք պետք է օգտագործեինք գույներ այս աղյուսակի համար…»),
- ստուգել հասկացածը՝ բարձրաձայն ձևակերպելով («Ահա ինչպես պետք է սովորեցնել այս նյութը…»):

Խմորման մակարդակի հմտություններն ուղղված են ուսումնասիրված նյութը վերահիմաստավորելուն, իրերի և երևույթների միջև եղած հակասությունները ճանաչելի դարձնելուն, նոր տեղեկատվություն փնտրելուն և այլոց եզրահանգումների ետևում իրականը հայտնաբերելուն, ակադեմիական բանավեճի մեջ մտնելուն: Այս խնդիրներն իրականացնելու համար աշակերտները պետք է կարողանան.

- քննադատել գաղափարներն առանց քննադատելու մարդկանց («Ես հարգում եմ քեզ, բայց այս դեպքում չեմ կարող համաձայնել քո մոտեցման հետ»),
- տարբերակել արտահայտված կարծիքները և դատողությունները («Ո՞րն է մեր մոտեցումների տարբերությունը՝ մեր ունեցած տեղեկության և եզրակացությունների առումով»),
- ինտեգրել գաղափարները մեկ տեսակետում («Այս եզրակացությունը ամփոփու՞մ է բոլորիս գաղափարները»),
- հիմնավորել պատասխանը («Թույլ տվեք իմ պատասխանը բացատրել»),
- տրամադրել ավելի ընդարձակ պատասխան («Այս հարցի վերաբերյալ գիտեմ մեկ բան ևս և ցանկանում եմ պատմել ձեզ դրա մասին»),

- ուսումնասիրել հարցերի միջոցով («Արդյոք դա կաշխատի՞ այլ իրավիճակներում»),
- որոնել այլ լուծումներ («Կարո՞ղ ենք դիտարկել որևէ այլ հնարավորություն»),
- բացահայտել իրականությունը՝ խմբային անդրադարձի միջոցով:

1.4 ԽՄԲԱՅԻՆ ՄՇԱԿՈՒՄՆԵՐ ԵՎ ԻՆՔՆԱԳՆԱՏԱՀՈՒՄ

Համագործակցային ուսուցումը ընձեռում է հնարավորություններ բազմաբնույթ կրթական նպատակներին հասնելու համար, ինչպիսիք են՝ ակադեմիական հասկացությունների, սկզբունքների և իրադարձությունների ընկալումը, միջանձնային հմտությունների զարգացումը և աշակերտների հոգեբանական առողջության բարելավումը: Կրթական այս արդյունքներին առնչվող ուսուցման գործընթացները ավելի բարդ են, զգայուն՝ արտաքին շեղող ազդակների հանդեպ և համեմատած ավանդական ուսուցիչ-աշակերտ ուսուցման գործընթացի հետ, ավելի անկանխատեսելի: Ահա թե ինչու, աշակերտների աշխատանքը, սովորելը և աճը պետք է մշտապես վերահսկել, գնահատել և հետևել:

Առաջին, ուսուցիչը պետք է օգնի աշակերտներին դիտարկել և վերլուծել իրենց սեփական վարքագիծը, մտածողությունը և զարգացումը և դրանց հիման վրա հասկանալ ինտելեկտուալ և սոցիալական գործընթացները ուսուցման ընթացքում: Երկրորդ, ուսուցիչը պետք է գնահատման նոր մեթոդները ընդգրկի ուսումնական դասերում, որպեսզի ներառի բազմաբնույթ կրթական խնդիրները այն չափանիշներում, որոնց հիման վրա կարելի է դատել արդյոք աշակերտները սովորել են այն, ինչ պետք է սովորեին:

Անկախ այն բանից, թե համագործակցային ուսուցման դասի ժամանակ տեղի են ունենում անհատական, թե կոլեկտիվ մտորումներ, նման դասը ուսուցչից պահանջում է զգալի չափով ուղղորդում և վերահսկողություն: Ուսուցիչները պետք է սկսեն պարզ խնդիրներից՝ տալով պարզ հարցեր: Օրինակ.

«Լա՞վ եք սովորել մեր այսօրվա նյութը»:

«Ինչպիսի՞ն են Ձեր հաջողությունները, որպես խմբի անդամ», կամ

«Ի՞նչ կարող եք անել հաջորդ անգամ՝ ավելի շատ բան սովորելու համար»:

Սկզբի համար խորհուրդ է տրվում օգտագործել մտորումների համար հատուկ մշակված քարտեր, որոնց վրա գրվում են հարցերը: Մտորումները համագործակցային ուսումնական դասերում ընդգրկելու մեկ այլ արդյունավետ միջոց է ամբողջ դասարանի հետ համատեղ քննարկումներ կազմակերպելը, որոնք վարում է ուսուցիչը: Պետք է կազմել այն հիմնական հարցերի ցուցակը, որոնք պատրաստվում է տալ աշակերտներին: Նման հարցեր կարող են լինել, օրինակ.

«Ինչպե՞ս էիք Ձեզ զգում ուսումնական դասի ժամանակ», «Ինչպի՞սի ուսուցում տեղի ունեցավ»:

«Ի՞նչ էր Ձեզ համար դժվար և ինչու՞», և «Սոցիալական ո՞ր հմտությունները կցանկանայիք բարելավել, որպեսզի հաջորդ անգամ ավելի հաջող հանդես գաք»:

Ուսուցչի կողմից իր դասարանում կատարվածի մասին տեղեկություններ ստանալու մեկ այլ եղանակ է աշխատանքի արդյունքների գնահատումը: Գնահատման ավանդական մեթոդները, ինչպիսիք են՝ թղթի վրա գրիչով գրավոր թեսթերը կամ բանավոր քննությունները, հիմնականում բևեռված են ակադեմիական ասպեկտի վրա: Հաշվի առնելով համագործակցային ուսումնական դասերի կրթական նպատակների բազմակողմանի բնույթը, միայն ավանդական գնահատման այս մեթոդները չեն կարող ստույգ կերպով ներկայացնել, թե ինչ պետք է սովորեին աշակերտները: Անթերի գնահատումը պետք է փորձի լուսաբանել փաստերի, հասկացությունների և իրադարձությունների իմացությունը, այլ խոսքով, ընդունված ակադեմիական գիտելիքը և հմտությունները, և միևնույն ժամանակ՝ ուսման գործընթացում կիրառված միջանձնային հմտությունների զարգացումը: Ինչպիսին էլ որ լինի գնահատման շրջանակը, կարևոր է աշակերտին բացատրել, թե ինչ է գնահատվելու, ինչ է ակնկալվում իրենից և ովքեր են ներգրավված գնահատման մեջ:

Գնահատման այլընտրանքային մեթոդների թվում են այնպիսի տեխնիկաներ, ինչպիսիք են թեմատիկ գնահատումը և կատարողականի գնահատումը: Այս երկուսը հատկապես նպատակահարմար են համագործակցային ուսուցման նպատակների համար: Թեմատիկ գնահատման նշանակությունները տարբեր են, սակայն սովորաբար այն նշանակում է, որ աշակերտները կարող են ի մի բերել իրենց լավագույն աշխատանքի մասերը՝ ցուցադրելու իրենց գիտեցածը, հասկացածը և այն, ինչ են կարող կատարել: Կատարողականի գնահատումն, իր հերթին, կենտրոնանում է աշակերտի կատարողականի ուղղակի դիտարկման վրա: Կատարողականի գնահատման համար օգտագործվող ընթացակարգերը արդյունավետորեն ընդգրկում են միավորների համար ընդհանուր կանոնների մշակումը և կիրառվում են նախապես սահմանված ստանդարտները, չափանիշները և ցուցանիշները: Համագործակցային ուսուցման միջավայրում երբեմն հնարավոր է գնահատումը կազմակերպել այնպես, որ անհատ աշակերտի գնահատման արդյունքները փոխկապակցված լինեն փոքր խմբում նրա թիմի անդամների գնահատման արդյունքների հետ:

Ի վերջո, համագործակցային խմբային աշխատանքի կիրառման դեպքում, կարևոր է, որ ուսուցիչը դիտարկի խմբերը, վերլուծի այն խնդիրները, որ ծագում է աշակերտների մոտ՝ համատեղ աշխատանքի ընթացքում և ապահովի հետադարձ կապ յուրաքանչյուր խմբի համար՝ որքան լավ են աշխատում նրանք միասին: Թե՝ ամբողջ դասարանի



և թե՛ փոքր խմբային աշխատանքների ժամանակ հետաքրքիր և զվարճալի են տոնակատարությունները: Բարեհաջող, գնահատված և հարգված լինելու զգացումն է, որ իրականում առաջացնում է սովորելու պարտավորություն և ինքնարդյունավետություն:

1.5 ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԸ

Արդյունավետ համագործակցային խմբային աշխատանքը հնարավոր է միայն այն դեպքում, երբ առաջադրանքը, որի վրա աշխատում է խումբը, տրված է այնպես, որ այն ավարտելու համար պահանջվում է թիմային աշխատանք: Մենք բոլոր հիմքերն ունենք ենթադրելու, որ շատ դեպքերում խմբի թվացյալ վատ աշխատանքի պատճառներից մեկը ***ոչ ճիշտ ընտրված*** առաջադրանքն է: Ուսուցիչը պետք է հասկանա, որ ոչ բոլոր առաջադրանքներն են հարմար համագործակցային ուսուցման նպատակների համար, քանի որ դրանք չեն նպաստում խմբերի միջև փոխազդեցությանը: Օրինակ, պարզ մաթեմատիկական բանաձևերի լուծումն, ինքնին, չի պահանջում խմբային աշխատանք հանձնարարությունը կատարելու համար: Մյուս կողմից, զեկույցի կամ ելույթի պատրաստումը կամ պատմական իրադարձությունների ուսումնասիրությունը արդյունավետ հնարավորություններ է ստեղծում խմբերից շատերում, եթե չասենք բոլոր խմբերում, իրական համագործակցություն զարգացնելու համար:

Որո՞նք են ուսուցողական առաջադրանքի այն առանձնահատկությունները, որոնք խթանում և նպաստում են համագործակցությանը, ակտիվացնում աշակերտների մասնակցությունը և առաջնորդում դեպի արդյունավետ ուսուցում: Համագործակցային ուսուցման դասերի համար համապատասխան առաջադրանքները պատրաստելիս, ուսուցիչը պետք է հետևի երեք հիմնական պայմանների, որոնց պետք է բավարարի առաջադրանքը: Այդ պայմաններն են.

1)Խմբի բոլոր անդամները պետք է ունենան մասնակցելու պատճառներ:

2) Առաջադրանքը պետք է խմբի բոլոր անդամներին խոսելու հնարավորություն ընձեռի:

3) Խմբի անդամները պետք է ընտրություն կատարեն և որոշում ընդունեն:



Մասնակցություն. Ինտերակտիվ ուսուցման առաջադրանքի պատրաստման ամենակարևոր ուղեցույցը այն է, որ խմբի բոլոր անդամները պետք է կարողանան հեշտությամբ մասնակցել առաջադրանքի կատարմանը: Ակնհայտ է, որ ուսուցողական ցանկացած լավ առաջադրանք պետք է հետաքրքրական լինի աշակերտների համար և համապատասխանի իրենց առօրյա

իրավիճակներին: Ավելին, լավ ինտերակտիվ առաջադրանքի կատարման համար սովորաբար պահանջվում են տարբեր տեսակետեր, կարծիքներ և գաղափարներ: Ի լրումն, համագործակցային ուսուցման առաջադրանքները հազվադեպ են միայն մեկ ճիշտ պատասխան կամ լուծում ունենում, սակայն դրանք կարող են հանգեցնել տարբեր արդյունքների՝ կախված կիրառվող մեթոդներից և խմբի կողմից որդեգրված ընտրություններից:

Գոյություն ունեն մասնակցության աջակցության տարբեր միջոցներ: Դրանցից մեկն այն է, որ աշակերտներն աշխատում են զույգերով: Երկու աշակերտից կազմված զույգը ամենափոքր, ինչպես նաև առավել կառավորվող խումբն է: Խմբի բոլոր անդամների մասնակցության միջոցներից մեկն էլ այն է, երբ խմբին հանձնարարվում է երկու քայլից կազմված առաջադրանք: Առաջին քայլը անհատական առաջադրանքն է, որի ժամանակ խմբի անդամներից յուրաքանչյուրն ինքնուրույն է կարդում, գրում, պլանավորում կամ կատարում աշխատանքը: Երկրորդ քայլը բոլորին հնարավորություն է ընձեռում ներգրավվել առաջադրանքում և պատարստել որևէ բան՝ խմբին ներկայացնելու համար: Այս կառուցվածքը խմբում առաջացնում է նաև անհատական հաշվետվություն: Երկրորդ քայլում խմբի անդամները միմյանց հետ կիսում և միավորում են իրենց անհատական ներդրումները և հիմնվում դրանց վրա՝ համատեղ արդյունք ստեղծելու համար:

Խոսելու հնարավորություն. Հետազոտությունը ցույց է տվել, որ արդյունավետ խոսակցության քանակը դրական կորելացիայի մեջ է ուսուցման որակի հետ, այսինքն, ինչքան շատ են խոսում և հաղորդակցվում աշակերտները այն մասին, թե ինչ են սովորում, այնքան ավելի շատ են սովորում այդ մասին: Առաջադրանքը պետք է արծարծի այնպիսի խնդիր կամ հարց, որն ունի մեկից ավելի լուծում կամ պատասխան: Սա է պատճառը, որ համագործակցային ուսուցման նպատակների համար հատկապես նպատակահարմար են բաց հարցերը կամ բարդ խնդիրները: Ինտերակտիվ խոսակցությանը նպաստող առաջադրանքն այն է, որը ներգրավվում է աշակերտներին՝ իրենց գաղափարները կիսելու, տեղեկության փոխանակելու, ընտրություն կատարելու և որոշում կայացնելու համար: Քանի որ դասագրքերը և ուսումնական ծրագիրը նախատեսված են միայն սովորելու համար, ուսուցիչներին անհրաժեշտ է իրենց ժամանակի որոշ մասը նվիրել ուսումնական նյութը և ծրագիրը համագործակցային ուսուցմանը համապատասխանեցնելու համար:

Ընտրություն կատարելը և որոշում ընդունելը. Հենց որ աշակերտները բախվում են այնպիսի իրավիճակի, երբ չկա առաջ տանող որևէ ճանապարհ, նրանք պետք է պլանավորեն և որոշեն, թե որն է ամենալավ բանը, որ իրենք կարող են անել: Ընտրություն կատարելը և որոշում ընդունելը օգնում է աշակերտներին փոխկապել ինչ են իրենք սովորել և ինչպես է հնարավոր կատարել առաջադրանքի մեկ կամ մի քանի ասպեկտները: Խելամտորեն մշակված համագործակցային առաջադրանքը աշակերտնեիրն հուշում է, թե որ գրքերից, աղբյուրներից են նրանք օգտվելու, ինչպես են

բաժանելու աշխատանքը, ինչպես են ամփոփելու և ներկայացնելու իրենց արդյունքները, ինչպես են գնահատելու իրենց սեփական աշխատանքի որակը:
Երբ աշակերտները համագործակցային ուսուցման քիչ փորձ ունեն, ուսուցիչը կարող է սահմանափակել խմբի համար հնարավոր ընտրությունները: Սկզբում այլընտրանքները կարող են նույնը լինել դասարանի բոլոր խմբերի համար, օրինակ՝ նրանք բոլորը կարող են ընտրել ցուցակում ներկայացված երեք առաջադրանքից մեկը: Ընտրությունների թիվը խմբերում, բնականաբար, աճում է համապատասխան հմտությունների զարգացմանը զուգահեռ:

Չկա որևէ կանոն, որտեղ նշված լինեն է համագործակցային ուսուցմանը համապատասխանող թեմաները: Ուսուցիչը, մի փոքր փոփոխելով, գրեթե բոլոր թեմաները կարող է դարձնել կիրառելի փոքր խմբային աշխատանքի համար: Այնուամենայնիվ, կան որոշ առարկաներ և թեմաներ, որոնք ավելի դյուրինությամբ են համապատասխանեցվում խմբային աշխատանքի համար: Սոցիոլոգիան, պատմությունը, հասարակագիտությունը, ինֆորմատիկան, ճշգրիտ գիտությունները և գրականությունը այն դպրոցական առարկաների թվում են, որոնցում ուսուցիչները կարող են առանց դժվարության գտնել արդյունավետ հարցեր՝ համագործակցային ուսուցման համար:

Եթե փորձենք կարճ ձևակերպել ինտերակտիվ խմբի առաջադրանքը, այն կլինի այսպիսին. «Յուրաքանչյուրը գիտի առաջադրանքի մասին որևէ բան, սակայն ոչ ոք չգիտի ամեն ինչ դրա մասին»: Այս կանոնը կիրառելիս, ավելի հավանական է, որ յուրաքանչյուր խմբում խմբի բոլոր անդամները կմասնակցեն և կզգան, որ իրենք իրենց ավանդ են բերում: Առաջադրանքը մշակելիս կարևոր է նաև ապահովել, որ այն լինի հետաքրքիր և իմաստալից աշակերտներից շատերի համար: Ավելին, առաջադրանքը պետք է հնարավորություն ստեղծի բոլորի համար՝ ասել կամ անել որևէ բան, ինչպես նաև ավարտել առաջադրանքը նույնիսկ նրանց համար, ովքեր միգուցե չունեն ամբողջ առաջադրանքը ավարտելու կարողություն: Ուսուցիչը մշտապես պետք է փորձի գտնել այնպիսի առաջադրանքներ, որոնք պահանջում են ավելին, քան կարող է կատարել մեկ անձը և նպաստում են փոխներգործությանը, հաղորդակցությանը և համագործակցությանը:

ԳԼՈՒԽ 2. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱՅԻ ԴԱՍԵՐԻՆ

Համագործակցային ուսուցման ընթացքում խմբի յուրաքանչյուր անդամ կամ ամբողջ դասարանը ակտիվորեն ներգրավված են ուսուցման մեջ, իսկ նոր գիտելիքը մշակվում ու յուրացվում է հենց աշակերտների միջոցով:

Համագործակցային ուսուցման ընթացքում կարևորվում է ոչ միայն ակադեմիական գիտելիքների և հմտությունների ձեռքբերումը, այլև խմբային գործընթացի մշակման միջոցով հմուտ համագործակցողներ (համագործակցային հմտություններ կիրառողներ) և գիտելիքների ակտիվ կիրառողներ (մտածողության

հմտություններ կիրառողներ) ձևավորելը: Համագործակցային ուսուցումը մեծացնում է նաև սովորողների ինքնուրույնությունը և պատասխանատվությունը (ինքնաճանաչման և ինքնուղղորդման հմտությունների կիրառումը):

Ընդունված է հմտությունների այսպիսի դասակարգում.



Համագործակցային ուսուցումը արդյունավետ է ինչպես ինֆորմատիկայի և ԹԳևՀԳ–ի դասավանդման ժամանակ, այնպես էլ միջառարկայական կապերը, խաչվող հասկացությունները ուսումնասիրելիս:

Ինֆորմացիոն տեխնոլոգիաների զարգացման տեմպը, ուսուցման ժամանակակից համագործակցային մեթոդները, սովորողների անընդհատ ինքնակրթության և զարգացման անհրաժեշտությունը պարտադրում է ուսուցման գործընթացում կիրառել այնպիսի տեխնոլոգիաներ, որոնք բարձրացնում են կրթության արդյունավետությունը և որակը, ապահովում են ինքնուրույն ճանաչողական գործունեության շարժառիթներ, նպաստում են միջառարկայական կապերի ամրապնդմանը՝ տեղեկատվական տեխնոլոգիաների և առարկայական ծրագրերի ինտեգրման եղանակով: Այս պահանջներին բավարարում է ուսուցման ինտերակտիվ մեթոդների, մասնավորապես ուսուցման հետազոտական, նախագծային մեթոդների կիրառումը:

Էլեկտրոնային ինտերակտիվ մեթոդների կիրառումը նպաստում է ուսուցման

գործընթացի բարելավմանը, ակտիվացնում և ստեղծագործ է դարձնում սովորողների և դասավանդողների աշխատանքը: Այս ինտերակտիվ մեթոդների շնորհիվ սովորողները հաճույքով են սովորում, ակտիվորեն են մասնակցում դասին և ավելի հեշտ են յուրացնում ինչպես կրտսեր, այնպես էլ միջին և ավագ դպրոցներում: Ինտերակտիվ մեթոդներն ապահովում են այնպիսի բազային հմտությունների և կարողությունների զարգացում, ինչպիսիք են մտածելը, ստեղծագործելը, պրպտելը, ոչ ստանդարտ լուծումներ գտնելը, ինքնուրույն կողմնորոշվելը, հետազոտելը և նպատակաուղղվածությունը:

Ինտերակտիվ դասերի ժամանակ կարելի է օգտագործել հատուկ դասարանային ցանցային ծրագրային ապահովումներ, ինտերնետային վեբինարներ (ցանցային, օնլայն սեմինարներ) ապահովող ծրագրերը (օրինակ՝ Microsoft Lynk Attendy), Flash ծրագրով ուսուցողական խաղեր և ինտերակտիվ թեստեր, վիկտորինաներ:

Ինտերակտիվ դասի անցկացման ժամանակ դասավանդողը պետք է կատարի միայն ուղղորդող դեր: Դասի պլանը կազմելիս անպայման անհրաժեշտ է հաշվի առնել դասի աստիճանական զարգացումը, գործիքների համատեղ օգտագործումը, թիրախները, վերջնական նպատակը: Ինտերակտիվ առաջադրանքները և վարժությունները սովորականից տարբերվում են նրանով, որ սովորողները ոչ միայն ամրապնդում են իրենց գիտելիքները, այլև ուսումնասիրման, դիտարկման միջոցով յուրացնում են նորը:

Այս նպատակով օգտագործում են Smart Notebook ծրագիրը: Դրանք օգնում են, որ սովորողները ավելի լավ և հեշտ յուրացնեն գիտելիքիները, քան դա կարող էին անել սովորական դասերի կամ դասախոսությունների միջոցով: Դասերը անցնում են ակտիվ, սովորողները ոգևորվում են, ցանկանում են մասնակցել բոլորը, արդյունքն ակնհայտ է դառնում, աշխատանքը՝ արդյունավետ:



Smart Notebook ծրագրով պատրաստված դասերը ավելի գունեղ են, սովորողներին գրավում է դրանց դինամիկան, ինքնաստուգում կատարելու հնարավորությունը:

Օրինակ՝ համակարգչի կառուցվածքը սովորողները ոչ միայն տեսնում են պանելի վիզուալ պատկերը, այլև կարողանում են անհրաժեշտ անվանումները ճիշտ տեղերում դնել, ասել հայերեն և միջազգային անվանումները, միևնույն ժամանակ ստանում են լրացուցիչ ինֆորմացիա սարքավորումների աշխատանքի, օգտակարության և անհրաժեշտության վերաբերյալ: Կարևոր է նաև այն, որ սովորողները իրենք են ստուգում իրենց կատարած աշխատանքի ճիշտ և սխալ լինելը: Հետո միասին քննարկում ենք, իսկական համակարգչի վրա ավելի լավ ուսումնասիրում և վերջնականորեն ամրապնդում ձեռք բերած գիտելիքները և հմտությունները:

Օրինակ՝ մուտքի, ելքի և մուտք-ելքի սարքավորումներ. դասարանը բաժանվում է երեք խմբի, յուրաքանչյուր խումբ փորձում է ընտրել սարքավորման ճիշտ խումբը, գրանցում ենք յուրաքանչյուր խմբի տված պատասխանը: Վերջում ստուգում ենք, գնահատում: Այնպես ենք անում, որ բոլորը գնահատված լինեն, չլինեն պարտվողներ, բայց առաջանա մրցակցային դաշտ, և հաջորդ անգամ սովորողները փորձեն ավելի հիմնավորված, մտածված պատասխաններ տալ: Այստեղ կարևոր է նաև այն, որ յուրաքանչյուր սարքավորման մասին տալիս եմ լրացուցիչ տեղեկություն, ծանոթացնում սարքավորումների անվտանգ և ճիշտ շահագործման կանոններին, բացատրում յուրաքանչյուր սարքավորման դերը և նշանակությունը:

Դասավանդման ընթացքում օգտվում եմ նաև ինտերակտիվ ֆլեշ խաղերից, օրինակ՝ հավաքում ենք համակարգիչ, «Դառնում ենք համակարգչային մասնագետ» և այլն:

Նախագծային մեթոդի կիրառմամբ ինֆորմատիկայի դասի պլանի օրինակ.

Թեման ուսումնասիրելու համար նախատեսված 3 դասաժամերի ընթացքում տարասեռ խմբերում կուսումնասիրեն նյութը, կստեղծեն սահիկաշարեր, իսկ 4-րդ դասին կներկայացնեն իրենց աշխատանքները:

Դասարան՝ 9-րդ

Առարկա՝ Ինֆորմատիկա

Թեմա՝ «Ալգորիթմներ» թեմայի ամփոփում, ներկայացումների ստեղծում

Դասի տեսակը՝ գիտելիքների, հմտությունների և կարողունակությունների կիրառման (համագործակցային, գործնական) դաս:

Դասի նպատակը՝ 1. Զարգացնել ալգորիթմները ներկայացնելու հիմնական՝ բառային, գրաֆիկական, ծրագրային տեսակները նկարագրելու, դրանք սահիկաշարով ստեղծելու, ցուցադրելու վերաբերյալ գիտելիքներն ու հմտությունները, ալգորիթմական մտածողությունը:

2.Զարգացնել համագործակցային հմտությունները:

Վերջնարդյունքը՝ Սովորողը կկարողանա.

- Առաջարկված խնդիրը լուծելու համար կառուցել նպատակաուղղված պարզ գործողությունների հաջորդականություն՝ ներկայացված սահիկաշարով:
- Խմբավորել և համակարգել այդ գործողությունները:
- Նկարագրել ի՞նչ է ալգորիթմը և ալգորիթմի հատկությունները:
- Կիրառել ալգորիթմին ներկայացվող պահանջները:
- Բառային կամ տեքստային տեսքով ներկայացնել գծային ալգորիթմների օրինակներ:
- Համեմատել թե ինչով են այդ եղանակները զիջում գրաֆիկական եղանակին:

Սարքավորումներ՝ պրոյեկտոր, ինտերակտիվ գրատախտակ, համակարգիչներ:

Ծրագրի աշխատանքային պլան

1. Ինքնուրույն կազմեք Ձեր ներկայացման պլանը
2. Ստեղծեք դատարկ սլայդներ Power-Point ում՝ 8-10 սլայդ
3. Տեղադրեք տեղեկատվությունը սլայդների վրա
4. Ձևավորել սլայդները
5. Պատրաստել և գործարկել ներկայացումը

Եզրակացություն

Համագործակցային ուսուցումը համատեղ սովորելու եղանակ է, երբ խմբի յուրաքանչյուր անդամ կամ ամբողջ դասարանը ներգրավված են ակտիվորեն, և գիտելիքը մշակվում ու հարմարեցվում է վերափոխման միջոցով: Համառոտ՝ համագործակցային ուսուցումը դա սովորելն է խոսելու միջոցով, երբ մեկը մյուսին օգնում են ըմբռնելու նյութը: Համագործակցային ուսուցման մեջ էական են ոչ միայն ակադեմիական գիտելիքներ և հմտություններ սովորելը, այլև կարևոր է խմբային զարգացման/մշակման միջոցով դառնալ հմուտ համագործակցողներ (համագործակցային հմտություններ) և գիտելիքների ակտիվ կիրառողներ (մտածողության հմտություններ):

Մեծ է ԹԳևՀԳ-ն, ինֆորմատիկայի, ՏՀՏ-ների դերը համագործակցային ուսուցման միջոցով սովորողների ինքնուրույնությունը և պատասխանատվությունը (ինքնաճանաչման և ինքնուղղորդման հմտություններ) զարգացնելու հարցում: Այն նաև հնարավորություն է տալիս ձեռք բերված գիտելիքները, հմտություններն ու կարողությունները օգտագործել մյուս առարկաներն ուսումնասիրելիս: Երբ համագործակցային ուսուցումը կիրառվում է խորությամբ, այն դառնում է դասարանի կամ երբեմն նաև ամբողջ կազմակերպության (դպրոց, միջավայր) աշխատանքային մշակույթ: Համագործակցային ուսուցումն ավելին է, քան պարզապես մեթոդը: Դա կրթության հանդեպ վերաբերմունք կամ մոտեցում է, որը ներառում է ուսուցման ժամանակակից հայեցակարգեր:

Համագործակցային ուսուցումը առավել արդյունավետ է միայն այն դեպքում, եթե այն իրապես համագործակցային է և ոչ թե պարզապես ավանդական խմբային աշխատանք է կամ՝ միայն ինտերակտիվ (փոխներգործուն) վարժություն:

Օգտագործված գրականություն

1.Ա. Հովհաննիսյան, Կ. Հարությունյան, Ս. Խրիմյան և ուրիշ. Համագործակցային ուսուցում: Ձեռնարկ–Եր.: Անտարես, 2006.

2.Վեսա Պուրուկուրու, Համագործակցային ուսուցում. վերապատրաստողի ուղեցույց-ձեռնարկ:–Եր.: Անտարես, 2006.

3.Պասի Սահլբերգ «Համագործակցային ուսուցման սկզբունքները», Հոդված 3, Հելսինկիի համալսարան. 2007

4. Պասի Սալբերգ և Ջոն Բերրի. «Մաթեմատիկան սովորելու և սովորեցնելու ընթացքը գիտելիքահեն հասարակությունում», Մանկավարժի մեթոդական ընթերցարան, 2007թ

5.Համացանց (https://learningapps.org/27560508, https://urok.1sept.ru/articles/561603/pril4.notebook ...)